ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Պատասխանատու Յովհաննէս Փիլիպեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻՈՅ

Նամակքն ուղղելի են առ Դ. Գ. Պալդազարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ | ԶՄԻՒՌՆԻԱ ՇԱԲԱԹ 14 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1878 | ԹԻՒ 1103

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Աֆղանիստանի ու Անգղիոյ խնդիրը որ երթալով պատերազմի կերպարանք պիտի առնոյր, այս օրերս թուլցաւ Անգղիոյ կողմէ ։ Այս խնդրոյն վրայ կ'արժէ որ պատմութեան կարգանցած մի քանի եղելութեան վրայ հակիրճ ակնարկ մի տամք ցուցընելու համար թէ մեծ անձարնները քաղաքականութեան մէջ մարգարէներ եղած են․ իրենց գուշակութիւնները շատ անգամ կատարուեր են ։ Ասկէ ճիշտ 40 տարի յառաջ(1838) անգղիական գրօշակը թէ Քապուլի և թէ Հերադի պատնէշներուն վրայ քաշուեցան, և Աֆղանիստան գրաւեցաւ Անգղիացւոց ձեռքով ։ Բայց Լորտ Աւքլանդ, Հնդկաստանի կառավարիչը, շուտով եւ թողուց իւր գրաւած երկիրը ։ Այս որոշման դէմ Լորտ Պալմըստըրն իւր դիմախօսեց ։ Ես, ըսաց, ի ներքուստ համոզուած եմ՝ թէ երկրին ամենամեծ շահերը պիտի զոհուին, եթէ թողումք Աֆղանիստանի ինքնուրական դիրքը ։ Լաւ հաւատացէք, աւելցուց պետական նշանաւոր մարդը, եթէ թողելու լինիք, ինչ որ ալ յառաջ բերէք ներկայիս համար առարկելով, օր պիտի գայ, յորում պիտի պարտաւորիք գրաւել զերկիրը անհուն զոհողութիւններով թէ մարդոց և թէ դրամոց ։ Դէպքերը յայտնեցին մեծ մարդոյն իրաւացի խօսքերը ։ Այն ժամանակ մեծ սխալ գործեց երկիր դաշնիճը ․ ժամանակէ մի յետոյ ուրիշ մի անձն ոչ սակաւ հեռատես, այն է սիր Ռօլինսըն, կ'ըսէր Խիվայի խանին ․ «Մեք պարտէզ մի ունիմք, որ է Հնդկաստանը, նոյա պատերը Աֆղանիստանի ամուր քաղաքներն են ․ թող Ռուսիա առնու զանոնք, և մեր պարտէզն իրեն կ'ըլլայ ։»

Խիվան առնուեցաւ, բայց Անգղիոյ կառավարութեան աչքը չբացուեցաւ ։ 1875 Յուլիսին հասարակաց խորհրդարանի անդամ սիր Բէյլի Կոշրէն Ռուսիոյ յառաջացումները վտանգաւոր լինելը իմացոյց, երբ սկզբունք մէջ բերելով թէ Աֆղանիստանն է տիրոյն բանալին, թէ այս իսլամական Ջուիցէրին հիւսիսային արեւմտեան Հնդկաց մարտկոցը, որ կըպարունակէ իւր մէջ բոլոր այն կիրճերը զորս արշաւող բանակ մի կրնայ կարել անցնիլ ու Հնդկաստանի վրայ խաղալ, հարկ է որ այս բանային Անգղիոյ կամ նորա պաշտպանութեան ներքև եղող իշխանաց մէկուն ձեռքն լինի ։

Ասկէ քանի մի տարի յառաջ Լոնտրայի աշխարհագրական ընկերութեան նախագահ սիր Հէնրի Րէուլայնսն կ'ըսէր, թէ Ռուսերն երբ որ է՝ Մերվի (Պուխարայ) վրայ պիտի յարձակին, որ Սելճուկեան Սուլթանաց հին և նուիրական մայրաքաղաքն է, ու կըյայտնէր միանգամայն՝ թէ ով որ Մերվա առնու, երբ որ է՝ Հերադին ալ կըտիրէ, որ Աֆղանիստանի ու Հնդկաց բանալին է ։ Ճիշտ էր սիր Րէուլայնսնի ըրած տեսութիւնը ․ որովհետև շատ չանցաւ Քօֆման զօրապետը Մերվա քաղաքի վրայ խաղաց, և Նէվիլ Չէմպէրլէյն հրաման ստացաւ նոյն կողմերը արշաւանք ընելու ։ Այս հրամանը համաձայնութիւն չընդունուեցաւ բոլոր կառավարութենէն ․ հասարակութեան և լրագրաց մեծ մասը թէպէտև տեսնելով Անգղիոյ պատիւը անարգուած, մէկ բերան պատերազմ ու վրէժխնդրութիւն սկսան աղաղակել, սակայն գտնուեցան մաս մի խոհական անձինք, նոյն իսկ խորհրդարանական անդամներէն, որոնք աւելի խոհեմութեամբ քան գահավիժաբար ուզեցին վարուիլ սոյն աֆղանական խնդրոյն մէջ ։ Սիր Հ. Րէուլայնսնի համաձայն և Գ. Գէյլէի Կոշրսն առանց բանակ վերցընելու Հերադի դէմ, խրատ կուտայր Քապուլի մէջ բարձրաստիճան անգղիացի մի գործակալ կարգելու ։

Այս խրատիս դէմ սիր Գ. Կէմպըլ առարկեց թէ՝ Աֆղանք անկախութիւն սիրող ազգ մի լինելով, անգղիացի գործակալ մի Քապուլի մէջ նստելու համար մահը ճիտն առնելու է, վասնզի շատ հաւանական է որ առտու մի ելնէ ու գըլխատեալ գտնէ զինքը ․ և թէ՝ սոյն իսլամաց Ջուիցերին միացեալ Թագաւորութիւն չէ, այլ անկախ ցեղերու խառնաշփոթ ցանկ մի է ։ Էմիրին այսօրուան ստորագրեալ դաշնագիրը վաղը մեռեալ գիր կըդառնայ առանց յարգուելու ․ վասնորոյ լաւ է, կ'ըսէր, ոտից վրայ հաստատ կալով դժբաղդութեան սպասել, քան թէ նորա դիմաց վազել ․ միակ քաղաքականութիւն որ լաւագոյնն է, եւ կենալն է ․ որոյ համար կըյանդիմանուի անգղիա․ կառավարութիւնը ։

Պ. Կոշրանի առաջարկը չընդունուեցաւ, ինչպէս յայտնի է ․ տագնապն երթալով սաստկացաւ ․ Անգղիա արթընցաւ քընէն երբ վերջին ժամը զարկաւ ․ բայց խիստ ուշ չմնա՞ց արդեօք ։ Մինչ Շիր—Ալի որսացեալ չէ՞ Ռուսիոյ կողմէ ․ և Պարսից Շահը նորա մօտ հարկատու անէրութիւն մի չը՞համարուիր ։

Շէյս Ալի Էմիրը տեսնելով անգղիացւոյ չարժումներն, ինքն ալ իւր զօրքը ոտքի հանեց և Ալի Մուսճիտի մօտ կըդտնուի, և մինչև Եամրուտի երեք մղոն մնացած տեղն հասած է ․ ուրտեղ բանակած է Հնդկ—անգղիական յառաջապահ զօրքը ։ Եամրուտ կրճին բերանը և Բէշավէրէն 500 ոտք բարձր տեղ է ․ իսկ Ալի Միւսճիտ ամրոցը սեպացեալ ժայռի մի վերայ կառուցեալ՝ ձորին մէջտեղը վեր ցցուած կ'երևի ։ Ինչպէս յայտնի կըտեսնուի, պատերազմական գործողութեանց և շարժմանց խիստ դժուար տեղուանք են ․ ուր մեծ ու սոսկալի ջարդեր կրեցին Անգղիացիք 1840—1842ի միջոցները ․ վասն որոյ այս անգամ միմիայն իրենց պատիւն է որ կըդրդռէ ի մարտ ․ ապա թէ ոչ պատրաստ են, ըստ երևութին, զիջանիլ՝ եթէ Էմիրը խոնարհելու լինի և իւր ըրած անարգանաց փոխարինութիւնն ընդունի ըստ առաջարկութեան Անգղիացւոց, եթէ ցարդ սկսուած չեն թշնամութիւնները ։

Լոնտրայէն հասած հեռագիր մի (21 Հոկտ.) կըծանուցանէ, ըստ տարաձայնութեան, թէ Էմիրը իրաւախոհ լինել խնդրեր է ։

Պոսնիոյ և Հերսեքի ապստամբեալ երկիրները գրեթէ հանդարտացած են շնորհիւ զօրաց Աւստրօ—հունգարական կառավարութեան, որ թէպէտև համեմատ Բերլինեան դաշնագրոյն գրաւեց յիշեալ երկիրները, այլ ոչ համեմատ կամաց Բ. Դրան և նոյն իսկ զօրութեան յիշեալ դաշնագրոյն չափաւորութեամբ վարուեցաւ իւր յանձնառեալ պաշտօնին մէջ, որ էր երկիրը բարեկարգել խաղաղական միջոցներով և ոչ արեան ճապաղեօք ։ Սոյն գործոյն մէջ աւելի մեծ վնասուողն ինքն աւստրիական կառավարութիւնն եղաւ ըստ մեզ ․ վասնզի բաց ի նիւթականէն, բարոյական վնասներ ևս կրեց քաղաքական նկատմամբ ․ թող որ խաղաղութիւնը տևական պայմանաւ երաշխաւորեալ չէ, այլև նոյն իսկ ներքին կառավարութեան մէջ յուզմունքներ ծայր տուած են ։ Ծանր է, ինչպէս կ'ըսեն, իւր վիճակը ․ Հունգարիոյ (Մաճառի) դաշնիճը իւր դժգոհութիւններն յայտնած է ․ ժողովրդային միակներով բողոքներ տեղի ունեցան ։ Պ. Դիցա Բէշտի խորհրդարանին նախագահը, իւր հրաժարականը տուաւ ․ խորհրդարանը լուծուեցաւ ։

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ ազգային լրագրաց մէջ վարդան առնուն Սեբաստացւոյ մի վերայօք դէպք մի կըկարդացուի ։ Սոյն դէպքը բաւական մեծ յուզմունք պատճառած է թէ ազգային ժողովոյն և թէ հասարակութեան մէջ ։ Կ'ըսուի թէ յիշեալ անձըՊատրիարքարանի ձեռօք աքսորուեր է իւր հայրենիքը, բայց հոն չէ հասած և ուր լինիլը յայտնի չէ ։ Պատրիարքական փոխանորդը, որ աքսորման թղթերը կնքողն է, պաշտօնէն հանուեր է, և ուրիշ քանի մի պաշտօնական անձինք սոյն գործոյն մէջ մատ ունեցեր են ։ Խնդիրը անաչառ քննութեան ենթարկուած է․ որոյ վախճանին կըսպասուի անհամբերաբար ։

—Հայկական խնդրոյ մասին, (խնդիր մի որ շատ հայերու էջ՞ն անցաւ), նոր խնդիր մի ևս ծագած կըտեսնեմք դարձեալ ազգ․ լրագրաց մէջ, այն է Թ. Պէկեան Էֆէնտիին խնդիրը ։ Կ'ըսուի թէ յիշեալ երեսփոխանը ծրար մի թըղթեր պահած է քովը և կ'ուզէ երեսփոխանական ժողովոյն մէջ աճուրդի հանել հրապարակաւ ․ և թէ՝ իրեն հակառակորդներ կըդտնուին, որոնք կըպահանջեն որ նախ նախաքննիչ մասնաժողովոյ քամոյէն անցնի, զտուի, ու այնպէս աճուրդի ելնէ, եթէ արժանի համարուի ։ Այս խնդրոյս ալ՝ ելիցը կըսպասուի խիստ մեծ անհամբերութեամբ ։

Պ. ԻՓԷՔՃԵԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Մի քանի օր կայ հազիւ ձեռք բերինք քաղաքիս երկսեռ դպրոցաց տեսուչ Հ. Իփէքճեանի տպեալ ծրագրէն մի օրինակը, այն է «Տեղեկագիր և առաջարկութիւնք տեսչին ազգային Մեսրոպեան և Հռիփսիմեան վարժարանաց Զմիւռնիոյ․» ուղղեալ առ Ս. նախագահ և առանդամս քաղաքական ժողովոյ ։

Նոր տեսչութեան սկզբնաւորութիւնն, ինչպէս կըյիշէ մէջը, Մարտի 29էն է, իսկ ծրագրին գործադրութիւնն, եթէ ընդունուելու լինէր ի ժամանակին, Սեպտեմբեր 1էն պէտք էր սկսիլ, ըսել է ճիշտ հինգ ամիս նոր տեսուչը պաշտօն չունէր ։ Բայց որովհետև իւր ամսականը Մարտի 29էն կըսկսի, հարկ էր ուրեմն որ հնգամսեայ շրջանի մէջ զբաղմունք մի ունենար ։ Կըտեղեկանամք իւր տեղեկագրէն (էջ 1. ծան.), որ արդարև բոլորովին պարապ անցուցած չէ իւր ժամերը ․ նախորդ տեսուչՊ. Մամուրեանին տեսչական ընթացքը քններ ու գտեր է որ իւր պարտաւորութենէն աւելի գործ տեսեր է, այսինքն օրը 1—1 1/2 ժամ հսկողութենէն զատ, փոխանակ շաբաթը 10—12 դասի, 20—24 դաս աւանդած է երկու վարժարանաց մէջ ․ ուսկէ, ըստ պահանջման արամաբանութեան, ուսումնական խորհուրդը, կամ լաւ ևս՝ հասարակութիւնը հարիւրին հարիւր աւելի արդիւնք պիտի ստանար երկու դպրոցներէն ։ Այս ճշմարտութեանս ինքն Պ. Իփէքճեան համոզուած լինելով, թերևս հասարակութիւնն ալ համոզել կըջանայ գովելով, քիչ մի անչափօրէն, իւր պաշտօնակիցը ու կ'ըսէ ․ «Արդարութեան պարտք մ'է ինձ յայտնել թէ ազգային գրագիտաց և վարժապետաց դասուն մէջ հազուագիւտ են նախորդիս տաղանդն ու հմտութիւնքն ունեցողներ ․ և թէ՝ տեսչութեան պաշտօնը վարելու համար ոչ այնչափ մանկավարժական հմտութիւն և ընդունակութիւն պակսած է իրեն՝ որչափ ժամանակ և միջոց ։»

Սոյն խոստովանութիւնն սրտանց է արդեօք, ներքին համոզմամբ գրած է, թէ լոկ քաղաքա-

վարութիւն կամ թէ ըսենք՝ չողոքորթութիւն է, քիչ մի վարը պիտի տեսնեմք։

Արդ՝ որովհետև խնդիրը միմիայն դպրոցական ուսմանց ծրագրի վերայ չէ, այլ ազգային արկեղ նիւթական վիճակի խնդիր ալ կայ, վասն որոյ մեք կը պարտաւորիմք այս տեղս երկրորդ խնդիրն առաւելապէս մեր տեսութեան առարկայ ընել։

Բնական է, որ մարդս որ և է գործոյ և ընթացից մէջ փոփոխութիւն մի ընել եթէ հարկադրի, միշտ առաւելութիւն մի գտնելու նպատակաւ է. ծառայ մի կը փոխէ՝ աւելի խոհականը, գործծոնն ու հաւատարիմը տեղը բերելու, կամ թէոր խնայողութեան համար է՝ աւելի աժանը գտնելու համար։ Սոյն սկզբանս համեմատ՝ նկատելով Պ. Իփէքճեանի տուած վկայութեանը, որով կը ներկայացընէ զՊ. Մամուրեանը իբր հաղ-աղէ-ա վարժապետ և դրագէտ՝ նորա ուսումնականութեան չմասին, և իբր մանկավարժական հմտութիւն և ընդունակութիւն ունեցող՝ տեսչական պաշտօնին մասին, ուրեմն ինչ հարկ կայր Տեսչաց փոփոխութիւն ընել, եթէ նախորդին վերայ ամենևին պակասութիւն չկայ, մանաւանդ թէ յուսացածին կրկինը արդիւնք տուող է։

Սոյն պաշտօնավարութեան մէջ պակասութիւն մի, կամ եթէ ներելի է ինձ ուրիշ բառով ըսել, յանցանք մի կայ, յանցանք մի որ անհաւատարմութեան չափ ծանրութիւն ունի ազգ. արկեղ՝վիճակին նկատմամբ։

Ո՞վ եղաւ նախորդ տեսչին տեղ զՊ. Հ. Իփէքճեանը բերել տուողը. — Ուսումնական խորհուրդը. բայց ուսումնական խորհուրդ չատոնց ի վեր չկայ. և եթէ ըլլայր անդամ, նորա իրաւասութենէ դուրս էր տեսուչ փոխել։ Քաղաքական կամ Ցնտեսական ժողովները. սոնք ևս չունին իրաւասութիւն փոխելու առանց երեսփոխանական ժողովոյ հաճութեան, բան որում տեսչին փոխուելովը դպրոցայ տարեկան ծախքը որոշուած սահմանէն պիտի անցնէր, որոյ համար արտօնութիւն չունէին ոչ Քաղաքական և ոչ Ցնտեսական ժողովները։ Ուրեմն մեր քիչ մի վերն ասած յանցանքը կամ՝ անհաւատարմութիւնը երեսփոխանական ժողովոյն վերայ կը ծանրանայ թէ հաճութիւն՝ տուած լինի և թէ ոչ. որովհետև վեց ամիս կը լինի Պ. Իփէքճեանի գալը և ինքը ամենևին լուռ մնալովը՝ հաճութիւն տուած կը համարի։

Մեք կը տեսնեմք Տեղեկագրին մէջ (էջ. 23—24) որ մինչև հիմա երկու դպրոցայ համար տարեկան 145,000 ղուրուշ ծախք կը լինէր, և տեսչին փոխուելէն յետոյ 1878—1879 տարուան ծախսը 175,000ը պիտի անցնի։ Այսչափը բաւական չհամարելով նոր տեսուչը, կ՚առաջարկէ տարին 230,000 ղուրուշ ծախք ընել. և սոյն առաջարկութիւնն շահա-որ և խնայողական կ՚անուանէ, անոր համար որ կ՚ըսէ, ա-ելէ հիմնա-որ կը-ռ-ի-ռ պէպ սպանն աշկերտ։

Ինչպէս կը պահանջէ Պ. Իփէքճեանը, առանց իսկ 12 և աւելի տարիներու և տեսչաց զանազան անդամու փոխուելովը ստացուած փորձերուն դիմելու, միմիայն Պ. Իփէքճեանի գեղեցկատիպ և փայլուն Տեղեկագրին խոստմունքներուն խաբուելով, ընդունիմք պահ մի նորա առաջարկութիւնը, և կամ այսպէս ըսեմք՝ տիրաբար հրամանները՝ նկատմամբ իւր յանձնապատան ոճոյն, որով կը փայլի բոլոր տեղեկագրին էջերը. կը հարցընեմք ուսկէ՞ պիտի վճարուի տարեկան 85,000 ղուրուշի աւելցած ծախսը։ Պ. Իփէքճեան աղբիւրը գտած է, այն է աշակերտաց ծնողաց գրպանները։ Սոյն միջոցն անցեալ տարի ևս ի գործ դրուեցաւ և հաղիւ 22,000 ղուրուշի գումար մի գոյացաւ, գրեթէ աղքատիկ դրպաններէ կորզելով. և ազգային արկեղ 127,000ին վրայ բարդուելով՝ եղաւ 140,000 կամ ըստ տեղեկագրին 145,000։ Դիցուք թէ այս տարի և եկող տարիներ ևս 22,000 տեղ 35,000 հանդանակեցաւ, (թեպէտ Պ. Իփէքճեան 100,000 դահեկան թոշակ հաւաքելու հրաման կ՚ընէ), ազգային մնուկէն տրուածի հետ միանալով, կ՚ելլայ գրեթէ 160,000 ղուրուշ 230,000ի երթալու՝ կ՚ուզէ 70,000 ևս. ուսկէ՞ պիտի հոգացուի սոյն գումարը։—Դիմին մէջ մի քիչ խելք և սրտին մէջ բարի խիղճ ունեցողն անմիջապէս պիտի պատասխանէ, թէ նոր տեսուչը բերել տուող անձը կամ ժողովը պէտք է վճարէ ի պատիժ իւր կարճատեսութեան։ — Ինչու.

Վասնզի Պ. Մամուրեան 11 տարիէն ի վեր է որ տեսչութեան և մանկավարժութեան պաշտօն կը վարէ երկու դպրոցայ մէջ և ժողովը ցարդ չէ կարողացեր քննել, իմանալ թէ. ունի՞ հաղուագիւտ տաղանդը իւր ստանձնած կրկին պաշտօններուն մէջ, ինչպէս կը վկայէ իւր յաջորդը. եթէ ունի՝ ինչ հարկ կար փոխել և օտարական մի բերել, առանց քննելու կամ քննել տալու հաւատարիմ անձի մի ձեռօք նորա անցեալն ու ներկայն, նորա տաղանդաւորութիւնը եթէ ունի՝ բաղդատելով Պ. Մամուրեանի ունեցածին հետ. իմանալ ՞ր ազգային դպրոցայ մէջ ծառայեր է, ինչ ուսմունք աւանդեր է, ինչ վարուց տէր է։ Եթէ քահանայացու մի ընտրելու լինիմք, նորա ամեն անձնական ու հոգեկան հանդամանքները կը քննենք և այնպէս եկեղեցւոյ մէջ կ՚ընդունիմք, միթէ վարժապետի ու տեսչի պաշտօնը նուազ կարևոր է քան զքահանայինը։

Անցնինք այս կէտերը։

Պ. Իփէքճեան կռահելով որ իւր պաշտօնակցին տուած դոլութիւնները ձախող տրամաբանութեան մի պիտի տանի զինքը, այնքան տաղանդաւորութեան համեմատ արդիւնք ցոյց չտալը նշմարելով, վերայ կը բերէ ըսելով թէ, «ժամանակ և միջոց չունէր»։ Սկեպտիկեանի մի համար սոյն տարադէպ խոստովանութիւնն ամենևին արժէք չունի՝ ինչպէս նաև մեզ, և անշուշտ ազգային դերեր ունեցող ամեն անհատներու ալ. նայելէս զարմանքը՝ չքսեմ թէ ծիծաղը՝ կը շարժէ։

Դիցուք թէ՝ ստոյգ չունէր ժամանակ և միջոց, եթէ գիտէր և ինքն Պ. Մամուրեան իւր պղատանական խղճիւ թէ չունէր ոչ մին և ոչ միւսը, յանցաւոր է ուսումնական խորհրդին չմատնելովը որ ճարը նայի և պէտք եղածը անորոնի. նեղ դաւոր է՝ 11 տարի ազգին՝ մօտ մէկ-կէս միլիոն ղ ահեկան գնաս տալովը։ Եթէ չէր գիտէր, յանցաւոր է ուսումնական խորհրդը, եղած կորուստը չզղալովը. յանցաւոր է երեսփոխանական ժողովը համարառութեան միջոցին մէկուկէս միլիոն դահեկանի փոխարէն իրը դպրոցական արդիւնք՝ գոնէ տասնեակ մի օրինաւոր դասատիարակեալ և ուսեալ աշակերտներ չտեսնելով՝ ձայն չհանելովը։ Քիչ մի ևս յառաջ անցնիմք. յանցաւոր է Ս. Առաջնորդը իւր անտարբերութեամբը. յանցաւոր է քաղաքիս ողջոյն Հայ հասարակութիւնը, որ չէ կրցեր կարող. բանիբուն խելահաս և քիչ շատ ուսումնական անձինքներէ բաղկացեալ երեսփոխանական ժողով մի ունենալ։ Միթէ ծանրացած չէ՞ ասանց խղճին վերայ մէկուկէս միլիոն դուսարի ճնշումն գաղտիարը։ Այս ճնշում ասածս երևակայութիւն չէ, իրական ճշմարտութիւն է. երանի թէ սոյն դէպքը իրը փորձ ծառայեր ժողովական յարգելեաց և բոլոր հասարակութիւն, որ գոնէ այսուհետև չխաբուեր տեսչաց փայլուն ճոխ և ռ-ի-ներով զարդարուած ծրագիրներու կամ պ-ելէկ-գիներու։

Խօսքերնիս չվերջացուցած ճշմարտութիւն մի ևս յերևան ածեմք, ոչ թէ մեք՝ այլ նոյն ինքն Պ. Իփէքճեանը, որու խօսքերուն՝ իրը դպրոցական Հերոս՝ մեծ կարևորութիւն կ՚ընծայուի, հետևապէս ընդհանուր հաւատք պիտի ստանայ իւր դրաւոր խոստովանութիւնը։

Ցիշեալ պատուելին, ինչպէս տեսան ընթերցողք, լիաբուռն դովասանութիւններ կը շռայլէ իւր նախորդին տաղանդաւորութեանը և մանկավարժական հմտութեանցը. և մեք ըսինք թէ արդեօք անկեղծ են՝ թէ չողոքորթութիւն։ Տեղեկագիրը աչքէ անցընողը երկրորդ գաղափարին պիտի կուտակցի։ Թերևս Պ. Իփէքճեան մտացը մէջ պահելով Պ. Մամուրեանի ասած խօսքը թէ՝ «Պ. Իփէքճեան դալովը միթէ՞ ինձմէ աւելի գործ պիտի տեսնէ. թող դայ ուրեմն և իզմիրցւոց համն առնու։» Պ. Իփէքճեան դիպլոմադիկ ձևով ուզեց վրէժխնդիր լինել իւր պաշտօնակցին. վերացոյց զինքն մինչև յերրորդ երկ[illegible]։ Ա[illegible] զինքը մինչև ի դժոխս իջեցընէ, այնպիսի փափկութեամբ՝ որ թերևս չզգայ Պ. Մամուրեան, ըստ որում իւր ձեռացը տակ զինքը պիտի ծառայեցընէ։

Ասաւասիկ Պ. Իփէքճեանի դրաւոր խոստովանութիւնները, որով կը հաստատէ իւր նախորդին տաղանդէ և մանկավարժական հմտութենէ զուրկ, անհոգ, և իւր պաշտօնին մէջ անբաւական լինիլը։

Ա. (Մամուրեանի) «ուսմանց ծրագրին անորոշութիւնը». (էջ. 10). որով չէ կրցեր Պ. Մամուրեան զարգացու-ցէ աշակերտաց մտքին վերայ, հեռաւորէս ի դուր աշխատած է. (էջ. 16)։

Բ. «Ուսումնական եղանակաց թերութիւնը», կը զարմանամք որ Պ. Իփէքճեան իւր պաշտօնակցին ժամանակ ու միջոց չունենալը միայն պատճառ տուած էր տարարդիւնութեան. իսկ այս տեղ ինչպէս կը համաձայնի ճշմարտութիւնն յայտնելու։ Սոյն ՌԷրի ԷՀԱՆ-ԿԸՀասատատ աշակերտաց Բ-ԸՐ-ՎԷՆ անգրդ մնալը. անգ-ր-ի-ն ընէլին. դ-սը խանգարէլին հայլն. (էջ. 10)։

Գ. «Աշակերտաց դասագիրք չունենալը». Այս պակասութիւնն քան մեղ քան զվիս երկուն աւելի մեծ պակասութիւն է. մանաւանդ երբ դասախօսուած ուսմունքը կրօնական է։ Մեք կ՚իմանամք, առանց երաշխաւորելու, որ կրոնագիտութեան դաս աւանդուելու է կամ կ՚աւանդուի բերանացի և եթէ՝ առանց դասագրքի. քրիստոնէական վարդապետութիւն կ՚աւանդուի եղեր բերանացի. մինչև իսկ դրաբառ կ՚ուսուցուի առանց քերականութեան, միմիայն յաչխարհաբառ է ի գրաբառ և ի դրաբառէ յաչխարհաբառ թարգմանութիւններ ընել տալով։

Դ. «Դասերու որոգրութեան եղանակը», որ մինչև ցայսօր ապօրինաւոր կերպով կը լինէր։

Պ. Մամուրեանի սոյն թերութիւնները մէջ բերելով իւր նոր Տեսչին խոստովանութիւններէն, միւսները կ՚ուզէի զանց առնել մեր սիրելի ընթերցողները չձանձրացընելու համար, ինչպէս են օրինակի համար՝ ե. Դասարաններէն մէկ քանին քանի մը ուսմանց մէջ իրենց ատիճանին համեմատ դաս չառնելը։ բ. Աւանդուած ուսմանց որոշ սահման գծուած չըլլալը. (էջ 16) գ. Ամեն բան գ-ռ-ա խառնաշփոթ և անպատրաստ վիճակի մէջ լինելը. (էջ 17). որանք ոչ թէ ժամանակի պակասութենէ, ինչպէս չողոքարար կ՚ուզեցուցընել Պ. Իփէքճեան, այլ տեսչին մանկավարժական անհմտութենէ յառաջ եկած թերութիւններեն, զորս ոչ ուսումնական խորհուրդը, ոչ քաղաքական և ոչ երեսփոխանական ժողովներն ևոչ՝ ցաւ է մեզ ըսել՝ Ս. Առաջնորդը կարողացեր են դդալ մինչև ցարդ, որանք չնորհիւ Պ. Իփէքճեանի յերևան եկան։ Եւ ցաւալին այն է՝ որ նորա չնորհիւ դարձեալ կ՚իմանամք թէ մեր դպրոցներուն ուսման միջոցները և ոչ իսկ քաղաքիս Ցունաց և Հրէից ուսման միջոցներուն կը հաւասարի։ Ամեթ մեր ազգին։

Պ. Իփէքճեանի տեղեկագրին մէջ տիրապետական (դ-ն-ա-տ-ի-կ) դրութեան նշմարանք մի ևս կը գտնենք՝ որ մեր ազգին մէջ կարգաւորեալ դպրոց մի Ուսումնական խորհրդոյ անմիջական հսկողութեան ներքև կը գտնուի. նմա համարատու են թէ տեսուչը և թէ դասատուքառանց բացառութեան։ Ժամանակաւ, յառաջ քան զՅանմանադրութիւնն, ստոյգ է որ ուսումնական խորհուրդ չլինելուն հոգաբարձութեան մի ձեռօք կը կառավարէր քաղաքիս դպրոցը, որոց պատասխանատու էր առաջին վարժապետը, որ միանգամայն տեսուչէր դպրոցին. և այնչեալ հոգաբարձութիւնը, որ ուսումնական անձանցմէ կը բաղկանայր, թէ ներքին կարգադրութեանց և թէ նիւթական պիտոյից կը միջամտէր համամտութեամբ տեսուչ վարժապետին։

Կ՚երևի թէ սոյն գրութիւնը ծանր եկած է նոր տեսչին որ կ՚ուզէ անկախ յումեքէ կառավարել զդպրոցները, և միայն հոգաբարձութեան պէտք մի կը ցուցընէ իւր ծառայ հրամանակատար, որ միայն դպրոցայ նիւթական պէտքերը հոգայ։ Տիրապետական գրութիւն ըսի, ճիշտ իւր բառէն առնելով, ըստորում Պ. Իփէքճեան գործոյն տէրը զինքը ցոյց կուտայ, և պաշտօ-

նան չհամարիր զինքը, վասնորոյ իւր անձը-ն լանուաոր հ-ոյզ-ըեան ներքև ունենալ կ'ուզէ նաև զդասատուները, զորս իւրեան պաշտօնեայները կ'անուանէ։

Ուշիմ ընթերցողը պիտի զդայ թէ ո՞ւր կը գնէ Գ. Իփէքճեանի նպատակը, որ իրը կանոն կը սահմանէ հետևեալ կէտերը. Ա. հոգարարձութիւնը պաշտօնէից և աշակերտաց հետ անձնական յարաբերութիւն չունենան։ (Բ. կէտը ընդունելի է։ Գ. կէտն անիծեաս)։ Իսկ Դ. կէտը, այն է հոգարարձութիւնը առանց տեսչին կարծիքն առնելու որևէ որոշում չընէ. և տեսուչը միշտ ներկայ ըլլայ հոգարարձութեան նիստերուն։ Այն երկու կէտերուն գումարը ուրիշ սահմանի չեմք կրնար վերածել, բայց եթէ տիրապետական դրութեան մի ազգային դպրոցի մէջ, և անկախ տեսչութեան՝ դպրոցի ամբողջ կառավարութեան մէջ. այն դրութեան համեմատ պաշտօնեայքը հրաժարեցընելու իրաւունքն ևս իւրեան կը վերապահէ. Այսպիսի անկախ և ինքնիշխան տեսուչ մի պիտի ընդունի երեսփոխանական ժողովը, ոչ միայն ազգ. մանկաւոյնքով, այլ իւր իսկ դլխուն վերևը կանգնած. որ հոգարարձութեան թոյլ կողմը միշտ գտնելով, նորա հաւանութիւնը առնելէն յետոյ՝ ինքն իւր ուզած դերը խաղայ։

Գ. Իփէքճեան, ինչպէս տեսանք, բոլորովին կը խուսափէ, և ոչ իսկ Ռուսմնական խորհրդոյ անունը կը յիշէ իւր Տեղեկագրին մէջ, այն աստիճան երկիւղ կամ կասկած ցոյց կուտայ ռուսմնական բառէն, մինչև իրը պայման կ'ուզէ ընդունել տալ՝ որ հոգարարձութիւնը, որոյ ընտրութիւնը յատենի երեսփոխանական ժողովն կը պնդէ որ անմիջապէս կատարուի, հոգարարձութիւնը կ'ըսեմ, կը պահանջէ որ ռուսմնական անձանցմէ չլինի, այլ առաւել վաճառականներէ և արուեստաւորներէ, և եթէ ռուսմնական անք ալ գտնուին կը փափաքի որ նոքա դաստիարակութեան խնդրոյն մէջ իւրեան դաղափարակից լինին։

Տեղեկագիրը իւր առաջարկութեանց ամփոփումն ընելով 15 յօդուածով, կ'ուզէ զայն առ Ս. Առաջնորդն և առ քաղաքական ժողովն, խնդրելով նոցա անյապաղ տնօրինութիւնը։

Այն Տեղեկագիրս վերայ մեք իրը ազգային խմբագիր՝ քննելով հասարակութեան կարծիքները և համամիտ դտնելով մեզ զանոնք՝, փութացինք այս անդամ լրագրիս միջոցաւ ի հրապարակ հանել, առանց միանդամայն մոռանալու յիշել, թէ Գ. Իփէքճեանի երեք ամսուան մէջ աշխատած Տեղեկագրին մէջ կան բաւականին օգտակար տնօրինութիւններ և ընդունելի կէտեր. իսկ ընդհանուր տեսութիւն ընելով՝ անյարմար կը դտնեմք նորա ամբողջութիւնը, նորա դրութիւնը և տիրապետական հոգին, և ինքնակար քաղաքիս ազգայնոց ներկայ վիճակին։ Արդ էն յիշեմք նորա մի քանի ինդասները. շատ ծնողք այն փոփոխութեանց վերայ տխրսահ լինելով՝ իրենց մանչ և աղջիկ զաւակները օտար դպրոցները դրին. ուրիշները տրոց հաւատքման եղանակին վերայ դժգոհելով, և տեսնելով որ այն տրոց վճարման համար իրենց անձնասիրութիւնը պէտք է զոհել, և անձամբ երթալ ներկայանալ Տնտեսական ժողովին և իրենց անկարողութիւնը խոստովանիլ, որ ծանր է պատուոյ տէր անձի մը, լաւ համարեցին իրենց զաւակը շուկայն հանել՝ քան թէ հաւասարակից մարդոց քով նուաստանալ՝ ներքին կացութիւնին յայտնելով։

Քաղաքական ժողովը այն Տեղեկագիրը տըպել տալով երեսփոխանական ժողովոյ ներկայացուց, նորա որոշմանը յանձնելով։

Երեսփոխանական ժողովը ամսոյս 4ին դումարեցաւ ատենապետութեամբ մեծ. Եսայի էֆ. Եսայեանի, յորում կընախագահեր Ս. Առաջնորդը։ Ատեանը բացուեցաւ և տեղեկագրին խընդիրը որ առաջին էր օրակարգի խնդրոյ մէջ, առաջարկուեցաւ դիտողութեան առնուլ։

Նախագահ Առաջնորդը խօսք առնելով՝ փութայ յայտնել, թէ Տեղեկագիրը Քաղաքական ժողովոյ կողմէ արդէն ընդունուած լինելով, երեսփոխանական ժողովոյ կը մնայ միմիայն դրամական խնդիրը կարգադրելով որոշում տալ։ Նոյնը սկսաւ պնդել և Գ. Մամուրեան էֆէնտին, միանդամայն առաջարկելով տեսուչ Իփէքճեան էֆէնտիին ներկայութեան հարկաւորութիւնը և առանց ժողովոյն հաճութիւնը կանխաւ ստանալու՝ ներս կը կանչուի, որ պատրաստ կը սպասէր դրան եռևը, և անմիջապէս ներս մտնելով ատոռի մի վերայ կը բազմի իւր ասպետական դիրքովը։ Տեսչին այն ապօրինաւոր կոչումը ժողովոյն մեծագոյն մասը տհաճութեամբ կ'ընդունի, դիտելով միանդամայն թէ՝ երեսփոխանական պատկառելի ժողովոյն ինչ աստիճան կարևորութիւն կուտայր նա։

Գ. Մամուրեան Տեղեկագիրը կարդալով, օգնութեամբ Ս. Առաջնորդին և տեսուչ էֆէնտիին, կ'ուզէր ցոյց տալ թէ՝ արդէն ընդունուած է այն. և կը հարկադրէր զերեսփոխանական ժողովը որ դրամական խնդիրը կարգադրէ։

Գ. Խաչատուր էֆ. Վարպետեան դիտողութիւն ը բրաւ Տեղեկագրին մէկ կէտին վերայ, յորում դրուած էր թէ՝ աղքատ տղայոց իրաւունքը էնտաֆներուն և հարուստներուն զաւակաց կը զոհուի (եր. 26)։ Ասոր դէմ բողոքեց յիշեալ էֆէնտին, թէ յանուն եկեղեցւոյ և դպրոցի եղած բոլոր ազգային կտակները ոչ ընտաւ յանուն աղքատաց, այլ յանուն ընդհանուր ժողովրդեան են, և մինչև ցայսօր այնպէս նկատուած է բոլոր հասարակութենէն. վասն որոյ և ձրի ուսում կը տրուէր թէ աղքատ և թէ հարուստ տղայոց։ Այն և ուրիշ ասոր նման երկրորդական խնդրոց վերայ բաւական խօսուելէն յետոյ, երբ Գ. Սարգիս էֆ. Դաւթեան տեսաւ որ Ս. Առաջնորդը համամիտ դտնուելով Գ. Մամուրեանին և նոր Տեսչին պահանջմանցը, անոնց կողման միշտ ոյժ կուտայր, և հետևապէս Սահմանադրութեան կանոնաց հակառակ դրքի մէջ կը դտնուէր, յիշեալ Դաւթեան էֆէնտին, ասաց. «Հակառակ եմ ես Ս. Առաջնորդին առածներուն՝ անոր համար որ հակառակ է նա Սահմանադրական կանոնաց։»

Յովհաննէս էֆ. Միրզայեան, որ ցայն վայր լռիկ ուշադրութիւն ընելով ամենուն ասածը կը կշռէր, տեսնելով որ քանի կ'երթայ խնդիրը կը կնճռի և ուղղութենէն դուրս կ'ելնէ, խօսք ուզեց. և սկսաւ խոհուն և կարգաւոր լեզուաւ խնդիրն իւր պարզութեան վերածել, Ս. Առաջնորդին այն խօսքին վերայ յենլով, զոր ըսած էր, թերևս անզգուշաբար, թէ Քաղաքական ժողովը Տեղեկագիրն ուղղած է գաւառ. ժողովոյ իրաւասութեան և նորա տնօրինութեան յանձնած։ Ուստի ասաց Միրզայեան էֆէնտին. «քանի որ այն ժողովս իրաւասութիւն ունի, ոչ թէ միայն դրամական՝ այլև Տեղեկագրին բոլոր բովանդակութեան վերայ ալ քննութիւն ընելու իրաւունք ունի, ինչպէս և քայ. ժողովոյ նամակին մէջ յիշուած 4 կէտերուն մինն ալ դպրոցաց նոր ուսմանց ծրագիրներու դործադրութիւնը որոշելն է։ Արդ քանի որ գաւառ. ժողովոյ կը պատկանի Տեղեկագրին մատուցած առաջարկութեց քննութիւնը, ես կը յայտնեմ պատկառելի ժողովոյս մէջ թէ Գ. տեսուչ Իփէքճեանը մեծ թերութիւն դործած է Ռուսմնական խորհրդոյ մի անհրաժեշտ պէտք լինիլը չյիշելով իւր Տեղեկագրին մէջ, որով մեղանչած է Սահմանադրութեան դէմ. ուստի հարկ է նախ և առաջ այն պակասութիւնը լեցընել ռուսմնական խորհուրդ մի կազմելով, և նորա յանձնել բոլոր Տեղեկագրին քննութիւնը, և եթէ յարմար դատէ մեր դպրոցաց թէ անոր տնօրինութեան եղանակները և թէ աւանդելիք ուսմունքները, այն ժամանակ գաւառական ժողովս ի նկատի առնելով դրամական խնդիրը, նորա կարգադրութեան կը զբաղի կամ հանդանակութեամբ կամ ազգային արկղէն հոգալով Գ. Իփէքճեանի պահանջած 250,000 ղուրուշը։

Այն առաջարկութիւնս որ խիստ իրաւացի էր, ընդհանուր ժողովոյն մեծամասնութեան կողմէ ընդունուելով՝ որոշուեցաւ հետագայ նստի օրաձգելու խնդիրը։ Գ. Իփէքճեան, Մամուրեան և Ս. Առաջնորդը տեսնելով իրենց իրաւանց տկարութիւնը և ֆլանելլոն քանդումը, որչափ և ֆանտոյին դուցանել, մանաւանդ Գ. Իփէքճեան էֆէնտին՝ թէ Ռուսմնական խորհրդոյ պէտք կայ, այն խորհուրդը թեմական դպրոցաց համար է, և մեզ հոգարարձութիւն մի բաւական է և թէ՝ Ռուսմնական խորհուրդն աւելի արդեք կը լինի քան թէ կընդասատէ դպրոցաց յառաջանալուն, այսու ամենայնիւ ոչ ոք կարևորութիւն տուաւ նոցա ոչ բարեմտութեամբ բրած առարկութեանց։ Ասոր վերայ ժողովը լուծուեցաւ 4 ժամ տևելէն յետոյ։

Երկրորդ նիստն եղաւ ամսոյս 11ին, որ բաւական երկար տևեց վիճաբանական յուզմամբ։ Նախ ըստ օրինի նախորդ նստին արձանագրութիւնները կարդացուեցաւ, և ի մեծ զարմանս ժողովոյն տեսնուեցաւ որ բոլորովին այլակերպեալ էր արձանագիրը։ Միրզայեան էֆէնտին բողոքեց դիւանին դէմ, մանաւանդ ատենադպիր Մամուրեան էֆէնտիին և ասաց թէ՝ ղեղծմունք մի է այս որ դործուեր է ճշմարտութեան դէմ։ Մամուրեան էֆէնտին, որ հեղինակ էր եղած ղեղծման, բողոքեց սոյն բառիս դէմ, բայց երբ Միրզայեան էֆէն. նախորդ նստին եղած խօսքերը յիշեց որոնք չէին արձանագրուած և զդալի փոփոխութիւնները ապացրցուց։ բոլոր ժողովը վկայութեամբ հաստատեց, և հետևապէս Մամուրեան էֆ. ակարանալով՝ խոստովանեցաւ թէ՝ եղած փոփոխութիւնները մասնաւոր դիտմամբ էին։

Ցաւալի է ըսել թէ՝ դիւանը կամ առ տկարութեան և կամ առ անփորձառութեան տարադէպ յուզուելով և կարծելով թէ Միր. էֆէնտիին ճշմարտութենէ հարկադրեալ, արձանագրին խարդախուելուն վերայ պնդելովը՝ անվստահութիւն ցոյց տուած ըլլայ իրեն, խմբովին հրաժարական կուտայ առ երեսս։

Մամուրեան էֆէնտին չակնկալած հարուածներ տեսնելով իւր դաղտնի խորհրդոց դէմ, և չկարենալով կշռուիլ իւր ախոյենին արդարացի առարկութեանց զորութեան հետ, կը յայտնէ՝ առանց զդալու որ նորա ձեռքը աւելի մեծ զէնք մի կուտայ՝ կ'ըսէ. «Գ. Միրզայեան ինքը առանձինն է որ կ'ընդդիմախօսէ, և կ'երևի թէ ժողովոյ մեծագոյն մասը՝ որ կը լռէ, հաւանութիւն կուտայ անոր խօսքերուն։»

Վերջապէս Ս. Առաջնորդը պնդելով դրամական խնդրոյն վերջ տալ, ըստ որում Գ. Իփէքճեան 1000 ֆրանքի դիրք բերել տուած է, և պէտք է որ անոր ստակը վճարուի, ուստի երեսփոխանները այսպէս կ'որոշէ. «Անցեալ տարուան չրջանի մէջ ազգային արկղէն տրուած 127,000 ղուրուշի տեղ միայն 100,000 ղուրուշ տրուի։ 22,000 ղուրուշ հանդանակութիւն ըլլայ կարող անձանցմէ, և 50 000 դՀաշ աշակերտացմէ թոշակ առնուի. որով կ'ըլլայ 172,000։ Իսկ տեղեկագրին դալով՝ Ռուսմնական խորհուրդ մի կազմուի և անոր յանձնուի ուսմանց ծրագիրը։» Այս վերջնական որոշման վերայ ժողովը կը լուծուի։

ՕԿԻՍՏ ՔՈՆԹ Ի ԶՄԻՄՌԻՆ
ԿԱՄ
ԱՆԱՄՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Այն մակագիրը կը կրէ անցեալ շաբթուանէ ի վեր քաղաքիս մէջ հրատարակուած տետրակ մի, հեղինակութեամբ Գ. Յոհաննէս Ոսկանեանի, որ դաղղիերէն լեզուաւ խմբագրեալ Լա Ռէֆորմ անուն լրագրին յարդոյ հրատարակիչն է։ Յիշեալ երկը, որ 36երեսէ բաղկացեալ է, հերքումն է անցեալները նոյնպէս քաղաքիս մէջ հրատարակուած Գ. Գալուստ Կոստանդեանի Մէնոֆի ֆլայ անուամբ գրքինոցուցընելու համար յիշեալ հերքման տետրին թէ կարդաւորեալ ոճը և թէ զօրաւոր ձեռնարկութիւններն ընդդէմ ցնորական վարդապետութեանց Մէթոտի, բաւական է իւր հեղինակին անունը յիշել, որ ոչ միայն ազգայնոց, այլև քաղաքիս օտար ազգաց քով ևս համբաւ դտած է թէ դաղղիարանութեան և թէ իւր հմտալից ոճոյ մասին։ Եթէ պակասութիւն մի ունի արժանի դիտողութեան, այն է Մէնոֆի լեզուաւ չդրելը։ Այն դիտողութիւնն ըրած է նաև տեղւոյս Լատինաց Առաջնորդ դեր. Սրաքքարիէդրա արքեպիսկոպոսը իւր շնորհակալութեան դրոյն մէջ, յորում բա-

ական գովութիւն ընծայելէ յետոյ մեր գաղղիաբան հեղինակին, որոյ երկասիրութիւնն ոչ եթէ տետրակ, այլ օրինաւոր գրքի մի արժէք ունի կ'ըսէ, կը յաւելու նաև. «Ներեցէք, իմ յարգելի Պարոնս.. մի գուցէ անհաճոյ երևիմ ձեզ, եթէ կըփափաքիմ որ ձեր պերճախօս փաստաբանութիւնը Հայերէնի ալ թարգմանուի։ Պ. Կոստանեանի կարկատուն գրուածքը կարդացած են հարկաւ Հայերն և Հայուհիք, որք ամենքն ալ չեն հասկանար Գաղղիերէն։ Ձեր դիտաւորութիւնն, որ է զանոնք մոլորութեանց և Պ. Կոստանեանի ամբարշտութեան դէմ զգուշացընել, ոչ ապաքէն աւելի լաւ իւր նպատակին հասած կըլլիներ։ . . . .»

Թէ յիշեալ հերքման տետրակը և թէ լատին Առաջնորդին նամակը՝ որ հրատարակուած է Լ-ՐԷֆորմ Հոկտ. 18 թուոյն մէջ, արժանի են ուշադրութեամբ կարդալու։

Ցաւալի կէտ մի կայ, զոր չեմք ուզեր զանց ընել, այն է որ մեր կրօնական խորհրդոյ և եկեղեցականաց պարտաւորութիւնը աչխարհականք կըկատարեն. Լատին Առաջնորդ մի աւելի հոգ կըտանի Հայ հասարակութիւնը մոլորութենէ ազատ պահելու, ընդհակառակը մեր առաջնորդները իբր Վրէյկան հովիւ՝ կարևորութիւն չեն ընծայեր կրօնական խնդրոց և կրօնափոխութեաց։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային Կրօնական ժողովոյ Կեդր. վարչութիւն

Սեբաստիոյ Առաջնորդի տուած տեղեկութեան համաձայն՝ Տիգրանակերտցի Մ. Յովսէփ անուն անձը ասկէ եօթն տարի յառաջ կ'ամուսնանայ ի Կեսարիա, տեղւոյն բնակիչներէն Զայլաք Սարգսի Ռեբեկայ անուն աղջկան հետ, և ամուսնութենէն երեք ամիս վերջ խոյս կուտայ և դեռ մինչև ցայսօր երևան չէ եկած. Նորա կինը այժմ ի Սեբաստիա մնալով, տեղւոյն Առաջնորդին միջոցաւ դարման կըխնդրէ իւր այս վիճակին. ուստի Ազգային կրօնական ժողովը յառաջ քան զտնօրինութիւն, ազգ. լրագրութեան միջոցաւ կըծանուցանէ թէ ով որ գիտէ այդ անձին ուր լինելը և կամ ինչ գործով զբաղիլը, անմիջապէս իմաց տայ Ազգ. Պատրիարքարանիս ի պատշաճ տնօրինութիւն։

Կ. Պոլիս, 5 Հոկտ. 1878 (ԿՆԻԲ)

Կրետէի բնակչաց և Մուխթար փաշայի մէջ համաձայնութիւն դոյանալով՝ պայմանագրութիւն մի հաստատուեր է, որով սկսած է և երկիրը խաղաղիլ և իւրաքանչիւր ոք իւր գործոց զբաղիլ։ Ահաւասիկ պայմանագրոյն գլխաւոր մասերը։

Յօդ. 3.—Ընդհանուր ժողովը 80 անդամէ պիտի կազմուի, 49 քրիստոնեայ և 31 իսլամ. իւրաքանչիւր քաղաքաց և գիւղից ժողովրդեան մեծամասնութիւն կազմող թուոյն համեմատ։

Յօդ. 5.—Քրիստոնեայ դայմագամները աւելի թուաւոր պիտի լինին քան զիսլամները տեղական պիտոյից համեմատ։

Յօդ. 6.—Վարչական ժողովները առաջուան պէս պիտի կազմուին, միայն թէ բաց ի Վալիէն, մուֆասարիֆէն, դայմագամներէն՝ որ նախագահ են յիշեալ ժողովոց, կառավարութեան ուրիշ պաշտօնեաները չպիտի անդամակցին։

Յօդ. 7.—Դատական իշխանութիւնը գործադիր իշխանութենէն անկախ պիտի լինի։ Ատեաններն անցեալն պէս պիտի կազմուին։ Եթէ ընդհանուր ժողովը յարմար դատելու լինի որ և է առաջարկ մի խնայողութեան և արդարութեան բաշխման աւելի օգտակար լինիլը, կարող պիտի ըլլայ Բ. Դրան հաւանութեանը ենթարկել։

Յօդ. 8.—Յետ այսորիկ ընդհանուր կառավարիչը՝ քրիստոնեայ Դ-ղվէր մի պիտի ունենայ՝ եթէ Վալին իսլամ է, և փոխադարձաբար։

Յօդ. 9.—Վարչական պաշտօնը բոլոր կղզւոյն մէջ առհասարակ երկու լեզուով ի գործ պիտի դրուին մաղթանքներն և բերանացի դատաստանները վարչական և դատական ժողովոց՝ նոյնպէս երկու լեզուով ի գործ պիտի դրուին։ Միայն ընդհանուր և դատական ժողովոց մէջ վիճաբանութիւնները յունարէն լեզուով ըլլան, քանի որում բոլոր կղզեցիք յունարէն կըխօսին։

Յօդ. 12.—Ոստիկանութեան զօրախմբի կազմութեան համար կառավարութիւնը պիտի ընդունի, համեմատ կայսերական կառավարութեան կանոնաց, տեղացի քրիստոնեայքն ու իսլամները՝ թէ որ խնդրելու լինին. և մինչև որ անոնց անբաւական լինիլը չհաստատուի, տէրութեան ուրիշ բնակչացմէ չառնուի։

Յօդ. 14.—Քայմէ չպիտի գործածուի կղզւոյն մէջ. և պաշտօնէից ամենականքը մետաղադրամ պիտի վճարուին։

Յօդ. 16.—Եթէ պաշտօնական հրամաններ գալու լինին որ հակառակ ըլլան ատենական ժողովոց և զօրութիւն ունեցող օրինաց և կարգաւորիչ (օրդանիդ) օրէնքին, գործադրութեան չպիտի ընդունուին։

Ռուսական կայսերութեան ազդեցութիւնն որքան որ մեծ է իւր սահմանակից փոքր տէրութեանց վերայ, այսու ամենայնիւ բուն իսկ իւր երկրին և իւր ժողովրդեան վերայ չունի նոյն ազդեցութիւնը, ինչպէս կ'երևի Նիհիլիզմը՝ օրից օր յառաջ երթալէն. որոնք իրենց ընկերութիւնը ծաւալելու համար բաց ի զանազան միջոցներէ, մամլոյ ուժն ևս կրծառայեցընեն երբեմն երբեմն տետրակներ հրատարակելով։ «Ազատ տպագրատուն» անուն գործարան մի ունին, ուսկէ ասկէ յառաջ Մէղէնցով զօրապետին սպանման վերաբերեալ տետրակ մի հանած էին. նոյն տպարանէն ելած է մօտերս ուրիշ տետրակ մի Կենդանի դ-ելները անունով. որոյ մէջ նկարագրուած են այն անգթութիւնները և անիրաւութիւններն որոյ զոհ պիտի լինին Նիհիլիստները. ասոնց վրէժխնդրութեան և ազատութեան համար օգնութեան կրկանչուին ժողովուրդք։ Սոյն տետրակին մէջ այսպէս գրուած է.

«Հեռի՛ մեզնէ, հեռի՛ մեզնէ այն դարշելի ձեռքերը՝ որ զմեզ կըխեղդեն և մեր բերանը կըխցեն, ապա թէ ոչ՝ մեր դաշոյնը չպիտի մնայ իւր պատենին մէջ։ Փնտռէ գտիր, ով ընկերութիւն ռուսական, այս դրութեան վերջ տալու եղանակը որ դէպի Մ՚ի՚ին դարու բարբարոսութիւնը վերադարձ մի է. եթէ ոչ՝ ականատես պիտի լինիս դու սարսափելի իրողութեանց, և անլուր դէպքերու։»

Թերևս այս խօսքերով ժողովուրդը գրգռել ուզած լինին. բայց սա ստոյգ է որ՝ կառավարութիւնը մինչև ցարդ չկարողացաւ այս յեղափոխական կուսակցութիւնը լռեցընել. մանաւանդ թէ Ս. Բեդերսբուրգի մէջ յանկարծ արիւնահեղ դէպքեր ծագելու երկիւղ կայ։ Ռուսական Գոլ. լրագիրը դեռ շատ չեղաւ՝ կըհաստատեր թէ, հակառակ պաշարման վիճակին և ոստիկանութեան զօրաց և փողոցաց մէջ գիշերապահ խաղախներու աւելնալուն, և ոչ մէկ յանցաւոր ձեռք ինկաւ։

Քաղաքին պատերուն վերայ յեղափոխական թղթեր կըկպցուին, զոր անմիջապէս ոստիկանութեան զօրքերը կըվերցընեն առանց փակցնողները տեսնելու։ Այս բաներս կըպատահին նաև Օտէսայի, Մոսկուայի և ուրիշ քաղաքաց մէջ։ Վերջին հրատարակուած տետրին ետևի կողմը գրուած է հետևեալ ազդը.

«Ի պատասխանի անթիւ խնդրողաց կը յայտարարեմք թէ՝ մեր Երիէ Ե աղաբ-ԲԻ-ն կոչուած լրագրին առջի թիւը պիտի հրատարակուի Հոկտեմբերի սկիզբը։ Տարեկան կամ վեցամեայ գինը պիտի ընդունուի այն անձանց ձեռօք, զոր հասարակութիւնը կըճանչէ։ Բաժանորդք ձրի պիտի ընդունին նաև տպարանէն ելած ամեն հրատարակութիւնքը։»

ՕՏԱՐ ԵՎ ՕՏԱՐ ԼՐԵՐ

Զմիւռնիա, 14 Հոկտեմբեր

Քաղաքիս ոստիկանութիւնը, բաւական ջանք ցոյց տուած է անցեալ շաբթու. բոլոր կասկածաւոր բնակութիւնները այցելեր ու բաւական կարևոր ձերբակալութիւններ ըրեր է։ Զէնք կրող քրիստոնեայք, որոնք օրինաց դէմ հակառակել ուզեր են, ձերբակալեր ու բանտարկեր է, դիշերներն ևս բաւական քաղաքապահ զօրքեր շրջադայութեան հանած է թաղային գողերն ղսպելու համար։ Բայց կըցաւիմք որ սոյն զգուշութեանց վերայ, դարձեալ մի քանի եղեռնական գործեր ու գողութիւններ տեղի կ'ունենան։ Եւ ասոր պատճառն է դատական ատենի թուլութիւնը, որ փոխանակ յանցաւորները խստիւ պատժելու, աւելի կըքաջալերէ իւր անտարբեր վարմունքովը։

—Քաղաքիս գաղտնի ոստիկանութեան գլխաւոր Նուրի—Պէյը չորեքշաբթի ժամը 7ին սրճարանի մէջ նստած միջոցին, յոյն մի ներս մտնելով, ու երկբերանեան ատրճանակը գնտակներով լեցուն՝ կռնակին վերայ պարպելու աներեւոյթ լինիլը մէկ բրաւ. ով ըլլալը դեռ յայտնի չէ. բացած վէրքը սարսափելի լինելուն անմիջապէս երեսն ի վայր ինկաւ գետին՝ արիւնաթաթախ և անշնչացեալ։

—Նոյն օրը իտալական շոգենաւ մի ի Նաւահանգիստս մտաւ, որոյ մէջ էր Գոզան օղլու Ա. մէտ փաշան. որ առանց ցամաքն ելնելու՝ հետևեալ օրը ճամբայ ելաւ դէպ ի Կ. Պոլիս։

—Կառավարութեան թարգման մեծ. Տիրան էֆէնտին անցեալ շաբաթ օր պաշտօնով Պերկամա գնաց Պ. Հումանի նոր գտած հնութիւնները քննելու։

—Գեր. Մելետիոս յունաց արհիմանտրիտը վիրաւորող Զէյցօ անուն յոյն եղեռնագործը Սիրայի մէջ բռնուեր է։ Նորին Սրբազնութիւնը իւր կատարեալ առողջութիւնը գտած է։

—Գաւառիս ներսերէն հաղարի չափ Չէրքէզներ ևայլն, եկան քաղաքս Բուսէլի երթալու։

—Աղէքսանդրիայէն կըգրեն թէ Նեղոսի յորդութիւնը տեղ տեղ բաւական վնասներ կըպատճառէ։ Տիմիտի և Մանսուրայի մէջեղ թումբ մի խորտակուելով՝ ջրին բռնութենէն, 2000 ֆէտան երկիր որ Նորին Վսեմ. Նուպար փաշային սեփականութիւնն են, ողողուեր են բարեբաղդաբար վնասը քիչ է եղեր, 27 տուն միայն քանդուեր և երկրին մէկ մասին հունձքը աւրուեր է։

—Հայաստանի մի քանի կողմերէ Շէֆիք Պէյի շնորհիւ գործուած բարեկարգութեանց լուրեր կըհասնին Բ. Դրան, որ անմիջապէս Պատրիարքարանի կըհաղորդէ։ Ուրախ եմք սոյն տեղեկութեանց վերայ, և առաւել ուրախ պիտի լինիմք եթէ ըսեմք ձեռք ինկած եղեռնագործաց մահուամբ պատժուիլը։

—Անգղիոյ վեհ. Թագուհին՝ Համամճեան մեծ. Սարգիս էֆէնտիին թանկագին ժամացոյց մի պարգև ղրկած է, որոյ վերայ դրոշմած է անգղիական զինանշանը։

—Պէկեան Թ. էֆէնտիի թղթերը կամ քննադատական գիրը կարդացուեր է յատենի երես. ժողովոյ, և կարևորութիւն չէ տրուեր։

—Խօլտամեան արժ. Պօղոս վարդապետը Ս. Պատրիարք Հօր ընտրութեամբը և կրօնական ու քաղաքական ժողովոց վաւերացմամբը առ. ժամանակեայ Պատ. փոխանորդ կարգուեր է։

—Ամսոյս 5ին ի մայրաքաղաքն հասեր է դեր Խորէն եպիսկոպոսն Նար—Պէյ։

—Յունաց վախճանեալ Պատրիարքի տեղ՝ Սկլանիկի դեր. Յովակիմ մետրապոլիտը ՅԵՆերի ազգային ժողովէն յաջորդ ընտրուեր է։

—Բ. Դուռը Անգղիոյ առաջարկած բարենորոգմանց ծրագիրը ընդուներ է. և Եւրոպայի լրագիրք կ'ըսեն թէ՝ բարձ. Սովգէթ փաշայ միւշիր էշարութեան պաշտօն յանձներ է Հայոց և չէ ընդունուեր, և ոչ անգղիական դեսպանը կարողացեր է համոզել զբրբազան Պատրիարքը որ ընդունել տայ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիշն. անցեալ շաբթու 138 և այս շաբթու 155 կողով վաճառեցան, առանց տարբերութեան գնոյ. 120—122 դահեկան չէքին ըստ տեսակին. պատրաստի ապրանք 3195 կողով։

Ձեր լրագրոյս,

Գ.—Ի— Գ. Պալէ-ղրեան։

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ